50. ԱԼԵՔՍԻ

Կէղի, չէղի բաղբրկան բաշի մի կէղի, անուն Ալեքսի։

Բաղբրկան բաշին կնկան կխոսա.— Կնիկ,— կըսա,— ես պիտի էրթամ խուրբաթ, թե ես յոթն ավուր մեչ չէկա՝ յոթ տարի ընձի սպասի։

Բաղբրկան կէլնի կէրթա։ Յոթն օր կթմի։ Կնիկ կտեսնա՝ ուր բաղբրկան էկավ։

Կմնա յոթ տարի, բաղբրկան մա լե էկավ, իսկ ուր իրիկ։

Թակավորին ջուհաբ կիտան, թե էսպես բան էղավ։

Թակավոր ղկնիկ խանչա, տանա ուր մոտ։

Կնկաց հարցուց, ըսեց.— Ո՞ր մեկն ա քու իրիկ։

Ըսեց.— Թակավոր սախ մնա, ես ի՞նչ գինամ՝ ո՞ր մեկն ա իմ իրիկ։ Ան ժամանակ, օր իմ իրիկ հ՚էլավ խուրբաթ էրթալու, ընձի ըսեց, թե՝ յոթն օրեն էկա՝ էկա, թե չէկա՝ յոթ տարի նոր կիգամ։ Թակավոր ապրած կենա, յոթն օր թմավ՝ մեկ էկավ, ճիշտ իմ իրիկն։ Յոթ տարին օր թմավ՝ մեկ լե էկավ, էն լե իմ իրիկն ա։ Մըկա ես չըգինամ, ո՞ր մեկն ա իմ իրիկ, ո՞ր մեկ չա։

Թակավոր հ՚ելավ, իր գիտուններ խանչեց ուր մոտ։ Գիտուններուն պատմեց։

Ըսեց.— Հըմլա բան մ՚ա մըր քաղաքի մըչ էղիր ա։ Իմ խելք չի հասնի։ Ամոթ բան չէ, որն որ գիտե, ըդ շարիաթ էնե։

Ինչ խըդար ուր էրկրի մեչ գիտուններ կար, խանչեց ու բերեց. մարդ մը էտոնց շարիաթ չկեռցավ էներ։

Հ՚ըմեն ըսեցին, թե.— Թակավոր սախ մնա, հեչ մեկիս լե խելք չի հասնի։

Թակավոր հ'էլավ, առավ ուր վազիր, հալվափովան ու թարկ ու սալատ էղան։

Թակավորին ըսեց վազիր.— Թակավոր, մենք հ'ու՞ր կէրթանք։

— Որթի, մենք պըտի օլորտինք, օր էդոր շարիաթ էնող գտնենք։ Քանի օր շարիաթ էնող չենք գըտե, պըտի օլորտինք։

Ու հ'ելան ընկան էրկիր։ Հասան Անատոլին։ Կէրթան Անատոլին, կտեսնան, օր էրկու տղա հեծած ա ղամիշ, էկան էտոնց հ'առեճ։

Ըսին—Դավրեշ-բարա, հրամեցիր, մըր թակավոր ձըզի կխանչա։

Թակավոր վազիրին ըսեց.— Դառցի, վազիր։

Հասան թակավորի մոտ։ Ինչ օր կարգն էր, էտոնց պատիվ բռնեցին, էրկու հատ շինված քարե աթոռք դրեց էտոնց տակ։

Հոտաղ տղեկներու թակավոր վերցուց դավրեշներու ըսեց.—Բարով եք էկեր։

Էնոնք լե բարևեցին։

Տլե կոտիկ սաքան շինած, գարին էրեցած, բերին մեկ-մեկ խավա, էդոնց պատիվ։

Ըդ վազիր վերցուց ներքև ձեռաց, թակավորին խոսաց, կըսա.— Ես չըմ խմի։

Թակավոր կըսա.— Զըհար լե էղնի, պետք ա մընք խմենք, չէղնինք ռեզիլ։

Բերեցին հաց։ Մեկին ճաշ ա, մեկին խորիս ա, ամեկ բան մի կերան։

Մըր թակավոր կհարցու հոտղու թակավորից, կըսա.— Թակավոր ապրած կենաս, քու անուն ի՞նչ ա։

Կըսա.—Օհանես թակավոր։ Ըսեց.—Դավրեշ բաբա, իմ անուն ընչի՞ հարցուցիր։

Ըսեց.— Ես քու անուն հարցուցի, օր ժողովրդին խոսամ, թե՝ հոտղու թակավոր էսպես պատիվ մը էնեց մըզի։

Ըսեց.— Դավրեշ բաբա, թակավոր օր կդնեն թախտ, ժողովուրդ ի՞նչ գինա թե ըդ թախտին արժանի ա։ Ես գինամ, օր թեթև շարիաթի համար լե ժողովուրդից կհարցուն, գինամ օր էլման մե թեթև շարիաթի համար կհալվափոխվին, էրկըրներ կօլորտին։ Էլ էտոնք իմա՞լ թախտին արժանի ին։

Մըր թակավոր կըսա.— Էտպես մարդիկ արժանի չեն թախտին։

— Դե,— կըսա.—Թուխտ կա՞ քու մոտ, մըր էրկրներ անկարգութուն կա հուքմաթի մեչ, ես խընդիրագիր մի տամ թակավորին, թե՝ մըր դատավորներ էսպես կվարվին մըր հետ։

Թուխտ կառնի, կգրա, օր թակավոր մի թեթև շարիաթ չրկեռնա էնե, էն թակավորութենի արժանի չի։

Թուխտ կգրա, ուր մոհր կզարկա, կիտա հոտղու թակավորի մոտ։

Կրսա.— է, դարվեշ բաբա, շատ շատախոսութեն էնեցիք, զձրզի ճամխից ետ թորկեցինք։

Դավրեշներ հ՝ելան կանան։ Մըր թակավոր շնորհակալութեն էնեց։ Մըր թակավոր հարցուց հոտղի թակավորի լալեքներու անունը։

Էն լե ըսեց՝ մեկին Սարդիս, մեկին՝ Հովանես։

Հոկցի կէլնին, կշնողքլին ըդ մարդերուց։ Երկու տղա էլման զամշը-նիր կհեծին, զէտոնք ճամբու կդնին։

Թակավոր ուր վազիրին ըսեց.—Վազիր, էս ա մըր շարիաթ էնող, թե չրկեռցավ էնեց, զիրեքի գլուխ լե կզարկիմ։

Դարցավ էկավ ուր էրկիր։

Էկավ նստավ ուր թախտի վրեն։ Ուր թակավորան չրլեր ընտեսակ շորեր մը կտրեց։ Ճամբեց էկավ հոտղու թակավորի քաղաք։ Էն տեխի վալուն դրեց. «Կէրթաս ֆլան գեղից, ֆլան տան տղեն, հոտաղ, կբերիս կհագցուս զէս հալվըներ, ինչպես օր թակավորի օրենքն ա, կառնես կի-ղաս մըր քաղաք»։

Վալին հ՝էլավ ըդ շորեր տարավ, հագուց հոտաղ տղին, ինչ օր կարգրն ա, էտոր պատվով բերեց թակավորի մոտ։

Թակավոր հ՝ելավ, առավ զուր վազիր, զուր զորքն, գնաց հոտաղ թակավորի հ՝առեճ։

Բերեց զէդ մարդ ուր դիվան։

Յոթն օր մացին։

Յոթն օր օր մացին, թակավոր ըսեց հոտղուն— Քինե հարցում մա պրտի էնեմ։

Ըսեց.— Թակավոր ապրած կենա, քու հարցումն էրա։

Ըսեց.— Իմ քաղքի մեջ բաղըրկան բաշի մա կար, էն ժամանակ օր խուրբաթ էղավ, կնկան ըսեց. «Թե հերի յոթն օր էկա, էկա, թե հերի յոթն օր չէկա, յոթ տարի իմ ճամբախ սպասիս»։ Յոթն օր թըմավ, բաղըրկան մը էկավ։ Յոթ տարին օր թըմավ՝ մեկ լե էկավ բաղըրկան։

Ըսեց.— Տղա, դինա՞ս, ես էն գեվրիշն իմ, օր էկա ձեր գեղ, քըզի խոնախ։

Ըսեց.— Թակավոր սախ մնա, ըտոր համար էր, դու ըտ խըդար ծախսի տակ մըտար, ընձի բերիր։ Մեջլիսներ կհասկընա՞ք, ճի՞շտ ա, օր դուք ըն դեվրիշներն իք։

Թակավոր կըսա.— Հա՜, մընք էն դեվրիշներն ենք։

Իրեք հեղ թաքրիր կառնա։

Կըսա.— Ուրշալ քիրարներ, տեսա՞ք օր թակավոր իրեք անգամ կըրկընեց, օր իրենք ըն դեվրիշներն են։

Քիրարներ կըսին.— Հա, մընք շահատ ինք։

— Չէ՞ ես ըն ժամանակ քըզի խոսացի, թե օր թակավոր մա ուր մասնավոր դատքի հարցում էնա ժողովուրդից, արժան չէ թակավորության։

Հովանես թակավոր կբերա մզրախ կտնկա, խնձոր մա կզարկա ծեր. կըսե.— Զէրկու բազըրկան քաշիք խանչեք՝ թըղ գան։

Բազըրկաններ հեր էկան, ըսեց.— Ով օր էլավ զխնձոր առավ բերավ, կնիկն ընդորն ա, մյուսին բան չկա։

Մեկ կիգա, կէնա, չէնա, չի կեռնա հ'էլնի։ Մեկելն կիգա, շուտ մա կթոնի մզրխի գլուխ, կնստի գլուխ, կուտա զխնձոր։

Կըսե.— Հ'իշի, ըդըրով չը փրծար, դատք մա լե կա քու հ'առեճ։

Կըսե.— Ի՞նչ դատք ա։

Կըսե.— Մըկա կիտամ քու նշանց։ Կըսե.— Քիչ մա ալուր բերեք ընձի։

Քիչ մա ալուր կբերին, կպարզա դետին։

Կըսա.— Էնպես քելիք վերևով, օր ձեր ռեչք չէրևա։

Մեկը կէրթա, ուր ռեչք կէրևա վերևով։ Ըն մեկել կիզա վերևով կընցնի, ռեչք չէրևա։

— Աղեկ,—կըսա Հովանես թակավոր։ Կըսա.—Ընձի թըվընքի մա լուլա բերեք։ Կըսա.— Ով օր մըտավ էս լուլեն, կնիկն ընդորն ա։

Մեկ բազըրկան կիզա, ուր խելք չըկտրա, օր մըտնի ներս։ Մյուս կիզա, հուշտ կմտնա լուլի մեչ։ Ու շուտով, հ'առեճ, կուռկուշունով զկուլի բերան կզմռա։

Կըսա.— Թակավոր, տեսա՞ր շարիաթ։ Էսա օր մտավ լուլի մեչ, ի՞նչ էր։

— Շարիաթ էնող դինա, իմ խելք չըհասի։

Կըսա.— Էտիկա սատանա էր, օր ես բռնեցի լուլի մեչ։

Հովանես թակավոր լուլեն կիտա մշկի մա, կըսե.—Տար թալ ի ծով։

Կըսա.—Ցոթն օրվան գալացող բազըրկան թալեցինք ծով, էս օր մացի՝ յոթ տարվան գալացող, կնկա տերն ա։

Կճամբա կնկա տուն, կտեսնա օր մեկ բազըրկնի մշկըներ կան։

Շարիաթ կվերչանա, ժողովուրդ կցրվին։

Թակավոր կէլնի, կհամբուրա զՀովանես թակավորի էրես։

Կըսա.— Որթի, ի՞նչ ունիս էրկիր։

Կըսա.— Թակավոր սախ մնա, ըխթիար պապ մը ունիմ, ախբեր մը ու մեր մը։

Թակավոր էտոնց համար չում ի մահվան փարա կճամբա, Հովանես Թակավորին կպահյա ուր մոտ, Հովանեսի վազիրն ու լալեն հ՝ամեկ մեկին կդրա քաղքի մա փաշա։

Թակավոր կէլնի ուր աղչիկ կպսակա Հովանեսի վրեն ու կէնա ուրեն հոգեզավակ։

Ըրջալ քիրարի հ՝առեն Թուխտ մա կիտա Հովանեսին, հ՝եբ օր հ՝ինք մեռավ, Հովանես նստավ ուրեն տեխ Թակավոր։

Էրկու խնձոր իշավ էրկընուց, մեկ՝ ասողին, մեկ՝ գրողին։